

ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ
ՍՈՒՐԵՆ ՊԱՐԹԵՎՅԱՆԻ ԵՐԿԵՐՈՒՄ

Ա. Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին հանդես եկած արևմտահայ գրական սերնդին դառն ճակատագիր վիճակվեց: 1885—1886-ի համիդյան կոտորածների սարսափները, դրանց հաջորդած հարկադրական գաղթն ու տարադրությունը, աստանդական թափառումները, գրական արտադրանքի համար աննպաստ պայմանները, քաղաքական կնճռոտ, երբեմն շհասկացվող իրականությունը՝ այս ամենն իրենց կնիքը դրեցին այդ սերնդի ստեղծագործության վրա: Ընդամենը երկու տասնամյակում հայ ժողովրդի արևմտյան հատվածին հասած երեք ծանր ողբերգությունները տաղանդաշատ գրողներին ստիպեցին շոշափել անսովոր թեմաներ՝ Եդեսի, ինքնապաշտպանական գոտեմարտ, կամավորական կռիվ կռու: «Նոր գրականությունը, — նկատել է Գր. Զոհրապը, — ճիշտ այս գրողը, այս կնիքը կկրե իր վրան, ամեն ինչ տառապանք է հոն, ամեն ինչ աղաղակ է և բողոք: Հայկական ջարդերու ականատես գրականությունն է. միտքերը մոռյլ, բառերը՝ դաշույնի պես փայլատակող, մահամոտ ու արյունաներկ գրականություն՝ հայկական ճակատագրի պես»¹: Ահա այդ սերնդի նշանավոր դեմքերից մեկը Սուրեն Պարթևյանն է, որի գեղարվեստական գործը և հրապարակախոսությունը XX դարի սկզբների հայ գրականության ուղադրավ էջերից են:

Սուրեն Պարթևյանը (Սիսակ Պարտիզյանյան) ծնվել է 1876 թ. դեկտեմբերի 15-ին, Կ. Պոլսի Գաթրգյուղում: Սկզբնական կրթությունն ստացել է տեղում, ապա ուսումը շարունակել է Պերպերյան և Կեղրոնական հաստատություններում: Ուսումնառության շրջանում նա աչքի է ընկել գրասիրությամբ, որը չի վրիպել մեծ երախտավոր Ա. Զոպանյանի ուղադրությունից: Վերջինս էլ 1895-ից պատանուն վստահում է «Ծաղիկ» հանդեսի խմբագրի աշխատանքը:

Արյունարբու սուլթան Համիդի կազմակերպած հայերի կոտորածներից մազապուրծ Ս. Պարթևյանը մի խմբի հետ (Ա. Զոպանյան, Եր. Օտյան, Սիւսանթո և ուրիշներ), հայ գրողների բարեկամ, ֆրանսիացի մտավորական Ալյուր Ռուի աջակցությամբ, 1896 թ. օգոստոսին թողնում է ծննդավայրը: 1896—1898 թթ. Փարիզում հաճախում է Սորբոնի համալսարանի գրականության դասերին որպես ազատ ունկնդիր և ներկա լինում Ա. Զոպանյանի տանը տեղի ունեցող գրական հավաքույթներին: 1898-ին տեղափոխվելով Անգլիա, Մանչեստրում հրատարակում է «Վաղվան ձայնը» թերթը, որի հրապարակումները և, մասնավորապես, «Մենք» առաջնորդող ժամանակակիցների (Ա. Զոպանյան, Եր. Օտյան, Ա. Արփիարյան) և մամուլի («Նոր կյանք», «Բազմավայր») վկայությամբ, գրական մանիֆեստի արժեք են ունեցել և հիմք են դրել «Կուլին քարոզի» զաղափարաբանությանը: Ի դեպ, Ս. Պարթևյանն իր «Վաղվան ձայնում» առաջինն է հրապարակել Սիսականթոյի անդրանիկ բանաստեղծությունը՝ «Մահվան տեսիլը», որով էլ հաստատվել է Սիսականթոյի մուտքը գրական ասպարեզ: 1900—1901 թթ. նա Փարիզում հրապարակում է նախ «Նարուպան» երգիծական ինքնատիպ թերթը՝ «Կուլին քարոզի» համար մարտնչող մի օրգան, ապա՝ «Ժողովուրդին համարը»: 1901—1902 թթ. Պարթևյանը խմբագրել է Լոնդոնի «Նոր կյանքը»: Գեղարվեստական առաջին դործերը՝ նովելներ, հրապարակել է մամուլում 1899-ից («Նոր կյանք», «Ժողովուրդի համար», «Աղալտ խոսք»)՝ «Հայ տառապանքեն» և «Դեպի ընդլղում» խո-

¹ Գրական ասուլիսներ. Կ. Պոլիս, 1913, հ. 3, էջ 14:

բազմերով: 1902—1908 թթ. նա գործել է ամերիկահայ միջավայրում: Բոստոնում 1904 թ. հիմնադրել և շուրջ չորս տարի խմբագրել է «Armenia» անունով անգլերեն թերթը, որը 1908-ից լույս էր տեսնում Նյու-Յորքում և իր գոյությունը պահպանել է մինչև 1930 թ.:

Սուրբան Համիդի կառավարության տապալումից հետո, 1908 թ. Ս. Պարթևյանը վերադառնում է հայրենիք: Կիլիկիային հասած նոր աղետի օրերին ընտրվելով Ազգային երեսփոխան, նա Զապել Նսայանի հետ 1909-ի ապրիլին գործուղվում է Ադանա և Մերսին՝ անապատան մնացած հայ բնակչության նյութական ու բարոյական օգնությունը կազմակերպելու: Այստեղ նա օր-օրի գրի է առնում իր նոթերը և հրատարակում գեղարվեստական-հրապարակախոսական մի արժեքավոր գիրք՝ «Կիլիկյան արհավիրքը» վերնագրով: Կյանքի իսմիրյան շրջանում Ս. Պարթևյանը հնարավորություն է ունենում մամուլում լույս տեսած իր նովելները հավաքել և նորերի հետ միասին հրատարակում է նովելների երկու գրքերը՝ «Քայքայում» (1910) և «Հալուհին» (1911):

Պարթևյանի կյանքի է գործունեության երրորդ շրջանը (1911—1921) կապված է եգիպտահայ գաղթօջախին ծառայելու հետ: Այստեղ նա հրատարակել է «Հոսանք» շաբաթաթերթը (1912), «Եգիպտական տարեցույցների» 5 գրքերը (1914—1918), «Արարա» քաղաքական-հրապարակախոսական գրքուկը (1914), «Անապատին հուշարձանը» գրական ամսանախը (1916), ինչպես նաև լույս է ընծայել իր նովելների երրորդ ժողովածուն՝ «Արյունին մատչանը», «Զանը հնչեց» վեպը (1915), «Անմահ բոցը» դրաման (1917): Ստեղծագործական այս շրջանում պարբերաբար լինելով հայրենիքում, 1913 թ. Եր. Օտյանի հետ հրատարակել է թատերական մի ամսագիր՝ «Նուշան», 1919-ին՝ «Հորիզոն» թերթը, 1920-ին սկսել է «Զմյուռնահայ տարեցույցի» հրատարակությունը՝ լույս ընծայելով առաջին գիրքը: Սակայն հիվանդությունը սաստկանալու պատճառով նա վերադառնում է Ալեքսանդրիա, ուր էլ 1921 թ. հուլիսի 10-ին, 45 տարին չբոլորած, վախճանվում է: Եգիպտահայ համայնքը 1932 թ. հուշարձան է դրել գրողի շիրիմին՝ ի նշան սիրո և երախտագիտության:

Զնայած կյանքի դժնդակ պայմաններին, Պարթևյանը թողել է դրական ու հրապարակախոսական հարուստ ժառանգություն, որը մինչև այժմ ըստ արժանվույն չի գնահատվել և մեր օրերում չի հրապարակվել: Որպես գրող և հրապարակախոս հանդես գալով համիդյան վայրագ հալածանքների և այնուհետև՝ երիտթուրքերի քաղաքականության շրջանում, տարադրության գրկանքների և հետապնդումների մեջ, հայրենասեր մտավորականը մշտապես այրվել ու տառապել է հայրենիքի բախտով: Նա սրտի ցավով արյունոտ էջեր է գրել մալի ժողովրդի կրած սարսափների մասին, ընդվզման ու կովի ձայն բարձրացրել ընդդեմ եղևնի, մերկացրել է աշխարհի «քաղաքակրթության հողերներին»՝ Ամերիկայի և Եվրոպայի բուրժուական կառավարությունների երկերեսանիությունը:

Պարթևյանի դեմոկրատական աշխարհայացքը ձևավորվել է ազգային-ազատագրական պայքարի համաշխարհային փորձի, ոուս, եվրոպական և հայ գրականության ազգային ավանդույթների ազդեցությամբ: Նրա գաղափարական հասունացմանն ու գրական ճաշակի ձևավորմանը նպաստել են գրական-հրապարակախոսական բազում կապերը:

Հայտնի է, որ արևմտահայ գրողները և, մասնավորապես, երիտասարդ մտավորական սերունդը, սկսած 1896 թ., դեգերելով աշխարհի տարբեր երկրներում, առաջին պահերին ընկնում էին իրարամերժ մտայնությունների և անկումային գաղափարների հորձանուտը: Պետք էր մեկը, որ այդ մղձավանջից սթափման ու պայքարի կոչ տար: Հենց Սուրեն Պարթևյանն էլ դարձավ առաջին շեփորահարը, որը, խզելով շուրջ երեք տարվա լռությունը, ազդարարեց. «Հուզումի շրջան մըն էր, որ անցանք, ալ ատենն է, որ մտածելու վարժվինք... Մեր թերթը պայքարի թերթ մըն է»²:

2 «Վաղվան ձայնը», 1898, № 1:

Ազգային ազատագրության գաղափարներով տոգորված հրապարակախոսության մյուս էջերը՝ «Խարազան» երգիծաթերթը, «Կիլիկյան արհավիրքը» ակնարկների զրբերը, «Արարա» գրքուկը, «Հայ երիտասարդությանը», «Մեր դրական գնահատումները», «Վաղվան գործը»³ և բազմաթիվ այլ հրապարակախոսական հոդվածներ ցույց են տալիս, որ անձնվեր գործչին սրտի ցավ ու գայլություն են պատճառել բուրժուական շրջաններում իշխող այն հերյուրանքները, թե իբրև Հայ ժողովրդի դառնադի ճակատագիրը ազգային խեղճության հետևանք է։ Պարթևյանը հերքում է այդ հերյուրանքները. «Եվրոպական դիվանագիտությունն իսպառ լքված, մատնված և անկե ալ հույսը կտրած հայությունն այս անգամ, իր անհուն կսկիծին մեջ չունեցավ նույնիսկ մխիթարանքը եվրոպայի կարծիքին և մամուլի կարեկից համակրությունը ու իրեն պատահած ահռելի դժբախտության ճիշտ ու հուզված հասկացողությունը վայելելու։ Եվրոպան անտարբեր ու ծանրացած ականջով մը լսեց հայկական կոտորածներու այս նոր զուլժը...»⁴։

Մերկացնելով աշխարհի հզորների կեղծիքն ու երկերևսանիությունը՝ Պարթևյանն ազգային գոյատևման հույսը կապում է Ռուսաստանի հետ։ «Ռուսաստանը, — գրում է նա, — Արևելքի ժողովուրդներու հզոր պաշտպանն է անշուշտ»⁵։ Այդ դիրքորոշումն սկսվել է Պարթևյանի հասարակական ու դրական կյանքի մտնելու առաջին իսկ շրջանից և շարունակվել մինչև նրա կյանքի վերջը։ Բազմաթիվ այլ առիթներով, երբ գրողն առնչվել է հայրենակիցների հուսալքման փաստերին կամ դրական ու մտավորական շրջաններում նկատվող անկումային տրամադրություններին, դրսևորել է իր դարմանալի կանխատեսումները և հուսադրիչ խոսք է ասել։ Այդ առումով ուշագրավ է Մեծ և զգուշացնող հետ՝ 1916 թ. գրված «Վաղվան գործը» հոդվածը, որը ժողովրդի հուսալքումը փարատելու և դրական ու հրապարակախոսական ուժերին հավատով ու ապագայի լույսով տոգորելու մի փայլուն էջ է Պարթևյանի ստեղծագործության մեջ, որի վերաձևն էր ապագայով մտահոգ գրողը, պատմականության խորունկ բմբռնումով, ազդարարում է լուսավոր ճշմարտությունը. «Թրքահայությունը, գեթ իր մեծության սահմաններում մեջ, արդեն իսկ կորսնցուցած իր երևելի պատորոշ իմաստը, երկարածգումը դառնալ է ռուսահայության։ Վաղր հալկական երկու գանգվածները պիտի համախառնվին ու հոգեխառնվին, և ազգային վաշտության կենտրոնը, աներկբայորեն, կովկասին պիտի վիճակվի պարունակել» (ընգծումը մերն է — Ա. Գ.)⁶։

Հայ ժողովրդի փրկությունը ռուսական իրականության հետ կապելու հույսերն են արտացոլված նաև Պարթևյանի գեղարվեստական և գրականագիտական մի քանի գործերում։ Բնորոշ են «Պատենիշի վրա» նովելը, «Ձայնը հնչեց» վեպը, «Անմահ զորքը» դրաման, ինչպես նաև «Լեոն Բաշալյան», «Տոլստոյ» հոդվածները և այլն։

Այսպիսով, գրող և հրապարակախոս Պարթևյանը, այրվելով մայր ժողովրդի ազատագրության երազանքներով, հանգում է պատմականորեն ճշմարիտ այն հետևությանը, որ միայն ռուսների օգնությամբ հնարավոր կլինի ազատագրվել դարավոր ճնշումից։

Ս. Պարթևյանի գեղարվեստական ողջ ստեղծագործությունը նույնպես շրջում է հայրենասիրության և ազգային ազատագրության գաղափարներով։ Բայց դա այն հայրենասիրությունը չէ, որ արտահայտել էին նախորդ սերնդի գրողները։ Իրավացի է Հ. Սիրունին, որ ժամանակաշրջանի բնութագիրը տալիս գրում է. «Հայրենասիրությունը, որ Ալիշանի հոգիին կծորի, չէր կրնար,

³ «Նոր կյանք», 1901, № 10։

⁴ «Հասարակ», Կահիրե, 1912, № 17։

⁵ Անադատին հուշարձանը, գրական ամսանախ. Կահիրե, 1916, հ. Ա, տետր 2

⁶ Ս. Պարթևյան. Կիլիկյան արհավիրքը. Կ. Պոլիս, 1909, էջ 7։

⁷ Ս. Պարթևյան. Արարա. Կահիրե, 1914, էջ 9։

⁸ Անադատին հուշարձանը. հ. Ա, տետր 2։

սակաւն, նոր օրերուն դիմանալ: Հայ հողը կխլրտեր իր ընդերքէն ու պայքարի կկանչեր իր զավակները: Կարելի չէր «հին հոգերով» գինովնալ ու փրփրիլ կարոտի երգերով: Ռազմի շեփորը պետք էր, որպէսզի առաջնորդեր նոր հայրենասիրութիւնը: Պետք էին նոր երգեր՝ նոր տղաքը խանդավառելու և կոխի դրուելու համար»⁹: Մի խոսքով, ժամանակը պահանջում էր դաժան կովի երգ: Ս. Պարթևյանի «Հայ տառապանքեն» և «Դեպի ընդվզում» խորագրերով նովելները, «Կիլիկյան արհաւիրքը» ակնարկների գիրքը, «Զայնը հնչեց» վեպը և «Անմահ բոցը» դրաման «ռազմի շեփոր» են, «նոր տղաքը խանդավառելու» կովի երգ: Համիդյան «կարմիր տարիներին»՝ 1895—1896 թթ. արշուճոտ արհաւիրքը՝ տարագրութիւնը, գաղթը Պարթևյանի ստեղծագործական ծրագրի առաջին էջն են: «Հայ տառապանքեն» (հետագայում «Քայքայում» գիրքը) խորագրով նրա նովելները սրտի ցավով ու զայրույթով են գրված: Նրանցում վեր են հանում տարագրիների ու գաղթականների կրած անլուր տառապանքները՝ մարդկային հոգու ավերման գեղարվեստական ընդհանրացման պատկերներով: Պարթևյանը, արծարծելով պանդխտության թեման, այն կարծիքին է, թե գերադասելի էր մնալ արշան հեղեղների մեջ, մահու և կենաց պարար մղել, քան օտարին ապավինելու կույր հավատով երազներն ու իդեալները կորցնել: Հայտնի է, որ պանդխտության թեման դարեր շարունակ զբաղեցրել է հայ գրչի, նրդի, վրձնի վարպետներին ու ժողովրդական ստեղծագործութիւնը: Պարթևյանը, հեռանալով ավանդույթային սահմաններից, գաղթաշխարհում տիրող հաստատարած տրտմութիւն և թափառումների մէջ գտնում է պատրանքների, անգիտակից կրքերի դատարկութիւնը և հայրենասիրութիւնը նոր վերազնահատում կատարում:

«Քայքայում» գրքի պիսավոր մոտիվը պատրանքների խորտակումն է, հարցերից ամենաէականը: «Պուտ մը ջուր...» նովելում արշունից ու ավերից փախչող տարագիր հերոսը ծանր հոգեվիճակ է ապրում, երբ տեսնում է, թե ինչպէս անգլիացի նավապետը՝ Բալաֆակիրը եվրոպացիին, դաժանորեն մերժում է նավաբեկչալների օգնութիւն, մինչև իսկ «պուտ մը ջուր» աղերսանքը: Ամեն տեսակ զրկանքներ ու նվաստացում կրած, ավերածութիւններ ու արշուն տեսած, շարագործութիւնների ենթարկված և «քաղաքակիրթ եվրոպացուն» հուսադրած հերոսը սոսկում է ապրում և սթափվում. «Ասիկա կլանքիս մեծ գիշերը եղավ... Ո՛ւր կերթայի կոր... եվրոպա, սուրտ երկիր», «քաղաքակիրթ ժողովուրդներու մեջ...»: Գործողութիւնների դարգացման ընթացքում գրողը բացահայտում է դառը ճշմարտութիւնն այն մասին, որ տարագրիների բռնած ճամփաների անստուգութիւնը ավելի ճնշող է ու հալածող: «Թրեհին մեջ», «Քրիսմաս»-ի իրիկուն մը», «Փրկութիւն բանակը» նովելներում արդեն պատկերված են դաղթականների ու տարագրիների ողորմելի վիճակի այնպիսի եղելութիւններ, որոնք վկայում են նասիրական աշխարհի շահամոլութիւնը և ղեկերողների ծայրաստիճան խաբվածութիւնը, նրանց սլաւորանքների խորտակումը:

«Քայքայումի» հերոսները այն գաղթականները չեն, որոնք օտարութիւն էին գնում արդյունաբերական քաղաքներում, «դուլարների երկրում» բախտ որոնելու: Պարթևյանի նոր հերոսները արշունվա, հուսահատական, հողով փշրված ու ջարդերից մազապուրծ՝ ապաստան որոնողներ են: Նրանք հայրենիքից փախել են դիակները թաղելու անդորութիւնից, դիակ դառնալու սարսափից, մի խոսքով՝ քաղաքական կացութիւնից հրամայված: Ուստի՝ «Քայքայում» գրքի առանցքային հարցը այրող իրականութիւն՝ սուլթանական Թուրքիայի կատարած ոճրագործութիւն դառնալի հետևանքների ցուցադրումն է:

Գրողին հույզող խնդիրներից մեկն այն է, թե ինչ էր կատարվում օտար տանիքի տակ «ապաստան» գտած գաղթականների հոգում, երբ նրանք ստիպված դիմում էին խղճահարութիւն մուրալու նսեմացմանը: «Քրիսմաս»-ի կիջավայրը լոնդոնն է, գաղթականների համար մի անհայտ աշխարհ: Հերոսներ-

⁹ 2. Ս ի ր ու ի. Դանիել Վարուժան. Բոխարեստ, 1940, էջ 27:

րի կյանքի դրամատիկ դեպքերը տեղի են ունենում այնտեղ, «ուր սալափառակներուն վրա ծախված սերը»՝ զարշնչի կերպարանը ունի, անբարոյականություն մղված աղքիկներն ամեն բայլափոխի բաշում են անցորդի փեշերից. «Գինե տներու դռները կգոցվեն ու կբացվեն, ու կինը, կինը կմտնեն ու կլլեն՝ անստույգ բայլերով ու երերուն մարմիններով»:

Լոնդոնյան շփացած կյանքի կողքին գրողը ներկայացնում է նաև բուրժուական աշխարհի մյուս երեսը՝ ծայրաստիճան աղքատությունը. «Ամբողջ ինկած մարդկություն մը կենդանուար այդ գոհիներուն մեջ: Բուպիկ ոտքերով ու կեղտոտ, սևացած դեմքերով լակոտները կթալտեին ցիխին ու աղտեղություններուն մեջ»: Ահա այս երկու ծայրաբևեռներում, սոցիալական հակապատկերների մեջ ընկած գաղթականը որոնում է իր ապաստանը, որը երբեք չի գտնում:

«Բայրայում» գրքի առաջատար մոտիվներից մեկն էլ հոգեկոտուստի դրաման է: Գաղթականների ճակատագրական բարոյալքումն է արտացոլված «Գթության գոհերը», «Մղձավանջը» և «Զապել» նովելներում: «Գթության գոհերում», օգտվելով հոկտոբրական արվեստի միջոցներից, Պարթևյանը զբոսաշրջ առ դրվագ ստեղծում է միջնորդական պատկերներ: Ազգային երեսփոխան Ավետիս Սարգսյանի, սոցիալ-հեղափոխական Արսեն Ունքունու և մտավորական Զարեհ Երկաթյանի վեճը գաղթական երիտասարդների նվառ աբարքների մասին, հանգում է հոգեբանական հետևության. օտար գթասրտությունը գաղթականների հոգեկոտուստի պարարտ հողը հանդիսացավ: Արսեն Ունքունին, մեղմելով ընկերների զայրույթը, ասում է. «Այդքան դառն մի ըլլաք այդ եղկեկներուն հանդեպ, գրուքյան գոհեք եմ անոնք»:

«Գթության գոհերը» նովելում պատմվող դեպքերի զեղարվեստական ընդհանրացումն այն է, որ օտար բարերարություն կոչվող երեսպաշտությունը, ինչպես թմրադեղ, գաղթականներից շատերին հաշտեցրել էր պատմական ճակատագրի ողբերգության հետ:

Պարթևյանն իր նովելներում դարգացնում է ոչ թե այն հարցը, թե ինչպիսին է կյանքը, այլ այն, թե ինչու է այդպես: Թափանցելով գաղթականության թևալով նովելների խորքը, դժվար չէ կոահել գրողի նաև այն միտումը, ըստ որի՝ գաղթաշխարհում ապահով կյանքով ապրող հայ շատ հարուստներ հայրենակիցների առջև փակել էին իրենց դռները, կողպել բակները և մի կողմ բաշվել: Պարթևյանի կարծիքով այս անտարբերությունն էր նաև պատճառը, որ հուսարված գաղթականները բախում էին օտար դռներ: Անշուշտ, հեղինակը փոքր-ինչ խտացրել է գույները՝ հաճախ մոռանալով ազգային տոհմիկ ոգին, հալ մոդուրդի դարավոր ավանդույթները: Սակայն նկատենք, որ մենք իրավունք չունենք ավելին պահանջել մի արվեստագետից, որը ինքն էլ առնչվելով գաղթականներին՝ կրել է դրականներ խառնաշփոթ մի ժամանակաշրջանում, երբ ոչ ոք սթափ հայացքով չէր կարող նայել երևույթներին: Հայրենասեր գրողը մտածենուհում հայացքով է նայում ազգային ողբերգությանը: Այդ պատճառով էլ նա ցանկանում է, որ ազգի ամեն մի անդամ, անկախ հասարակական պատկանելությունից, կանգնի բարբարոսության դեմ:

Հազիվ թե մեկ ուրիշ գրող այնքան մոտիկից ու սրտացավորեն առնչված լինի գաղթականության պրոբլեմին և օտար ափերում զեղերգների հոգեկան ցուցումներին, ինչպես այդ արել է Սուրեն Պարթևյանը: Պարթևյանի այն միտումը, թե՛ «գաղթականները մեր ազգային դժբախտության շրջուն պատկերներն են, պետք է ներդրամիտ ու անհիշաշար ըլլանք անոնց հանդեպ»¹⁰, ճշմարիտ ընդհանրացում է: Զե՛ որ նրան է պատկանում նաև հայ ժողովրդի ճակատագրի դիպուկ բանաձևումը. «Մեր կյանքը միշտ փոթորիկ մը եղած է»¹¹:

«Բայրայում» նովելների ժողովածուն յուրօրինակ մի եղերերգություն է, ազգային վշտի մի նոր էջ, որն այնքան վարպետորեն բացել է Պարթևյանը: Մի խոսքով, այս շարքում պատկերված է հայ ժողովրդի ճակատագրական այն

¹⁰ Ա. Պարթևյան. Կիլիկյան արհավիրքը, էջ 6:

¹¹ «Հայ գրականություն», Զմյուռնիա, 1911, № 1.

պահը, երբ անորոշ ու քառասյին իրարանցման մեջ ընկած դադթականը փեր-կության ուղին դեռևս չէր դադարում: Սակայն հատկանշական է, որ Պարթևյանը եղևոնի թեմայով գրած իր առաջին իսկ նովելները հագեցնում է նաև հույսի և հավատի դրվագներով: Նա ցանկանում է կեցության պրոբլեմը դարձնել քրե-նության նյութ՝ ընդլիցման ուղի ներարկելով իր հերոսների մեջ: «Հայուհին» գրքի նովելներում, գեղարվեստական նոր միջոցներով ու խորությամբ, կեր-տելով եղևոնի իրական պատկերների մեջ տառապող հայուհիների կերպար-ներ, գրողը նրանց մեջ խտացրել է թշնամու բարբարոսության հանդեպ ատե-լությունն ու վրեժը, ընդլիցումը:

Հայուհու թեման կապված է Պարթևյանի գրական գործունեության ողջ ըն-թացքի հետ: Սկսվելով «Սալթիկ» նովելից (1900), այնուհետև այդ թեման ուղեկ-ցում է գրողին մինչև իր մահկանացուն կնքելը, մինչև գեղարվեստական վեր-ջին գործը՝ «Ընկերուհին» (1921): Ասել է՝ Պարթևյանը շուրջ երկու տասնամ-յակ հարազատ է մնացել այդ թեմային: «Հայուհին» նովելների գիրքը, «Ան-մահ բոցը» դրաման, «Ընկերուհին» նովելը վկայում են, որ հայրենասեր ար-վեստագետը հայուհուն ճանաչել է ի մոտո:

Ժողովածուն բացվում է ցնցող մի գործով՝ «Սալթիկ» նովելով: Սա Պարթև-յանի ստեղծագործության ամենավաղ էջերից մեկն է, տաղանդի ինքնատի-պության պսակը: Խորհրդապատկերների (եղևոնական վերջալույս, փոթորկոտ կոհակներ, նփրատյ մութ վազ) և հերոսուհու հոգեկան լարվածության (մտած-կոտ ու ցավագին, տաժանփոտ ֆայլեր, կսկիծեն ավելի ուռած լանջ) զուգոր-դումով հյուսվում է գեղարվեստական մի պատկեր, որը լեցուն է ներքին ող-բերգությամբ: Բայց հենց դրա մեջ ուրվագծվում է Սալթիկի ըմբոստ կեցված-քը՝ իր հուսահատության դեմ ծառացած հայուհու մտասեևելած դիմապատկե-րը: 1896-ի աղետի օրերին ավագակ Հասանը գիշերով ներխուժել է գյուղ և հափշտակել ամենաչքենաղ աղջկան՝ 14-ամյա Սալթիկին և երկու ամիս պահե-լուց հետո, առևանգված մյուս աղջիկների հետ, ցույց է տվել գյուղի ճամփան. «Գացե՛ք, կյավուրի սիրուն աղջիկներ, գացե՛ք առանց հետևիդ նայելու...»: Հերոսուհին անկարող է տանել ծանր վիրավորանքը, որ իրեն հասել է անպատ-վության հետևանքով: Իրականության ու իդեալի սուր հակադրությամբ, ըմ-բոստացման գաղափարատիպ կերպարը կերտելով, Պարթևյանը ընթերցողին մղում է մտածումների աշխարհը. Սալթիկ իրենից ծնված էակին ձգվում է ոտքերի տակ «Սատկե՛, սատկե՛, շան գավակ» ընդլիցումով: Գրողին թվում է, թե հայուհին պատրաստ չէր գնք վերցնելու, որովհետև նրան ոգևորող ու առնա-կանություն ներշնչող չկար: Սակայն Սալթիկի կերպարում հեղինակը խտացված գույներով դրել է գալիք խիզախումների և հայրենիքի համար մաքառումների նվիրական գաղափարներ: Մյուս կողմից, ինչպես ցույց են տալիս նաև «Արու-նին հաճախանքը», «Կարմիր շուշանը», «Քույրը», «Ձապել» նովելներում, «Ան-մահ բոցը» դրամայում և դաժ գեղարվեստական փաստերը, համագգային ինք-նապաշտպանության գործի մեջ Ս. Պարթևյանը հայուհուն դիտում է որպես սրբություն-սրբոց. «Իրեն կմոտենայի և ճակատեն կհամբուրեր, ինչպես կը-համբուրեն խորանի վրա դրված մասունք մը», — ասում է «Արյունի հաճա-խանքը» նովելի հերոսը:

Եղևոնի շրջանից մի այլ պատկեր է նկարագրում Պարթևյանը «Հացին ուժը» նովելում: 1896-ի աղետին հաջորդել է մահից փրկվածների դանտեական տառապանքը. «Յորենը չէր կանչել, ու գութանի նվիրական լիկումեն այրիա-ցած արտերը, լերկ ու խոպան, իրենց լքված ու անարգավանդ մայրությունները կսգային... Ու սովը իր մահաշունչը կփչեր հիմա»:

Հայրենասիրության և ազգային-ազատագրական պայքարի թեման վառ ու կենդանի պատկերներով արտացոլված է Պարթևյանի նովելների երրորդ գրքում՝ «Արյունին մատչանք» շարքում: Սրա հրատարակումն առանձին գրք-քով (1915) Պարթևյանի համար ուներ այն նշանակությունը, որ դրանով գրողն արձագանքում էր նաև Մեծ եղևոնին՝ պայքարի կոչելով ահաբեկված ու սար-սափից քարացած ժողովրդին՝ ազգային ազատագրության գաղափարները հաստատելով: Հերոսական պայքարի դրամատիզմի և գրողի անխառն լավու-

տեսության տրամադրություններով հագեցած գործերն ուղղված են նաև պատերազմի ու սպանդի դեմ: Ոտքի ելած կամավորները հայրենիքի ազատագրության համար «Սուրբ կովի» հերոսներ են: Նրանց միավորում է հասարակական կյանքում առաջ եկած շարիքը վերացնելու գիտակցությունը: «Դուն հանգիստ չնչիր, Սարո՛ ջան,— զոհված ընկերոջ թախանձանքին խրոխտաբար պատասխանում է ռուս կամավոր Յագորը,— կգա ժամանակ, երբ մենք Սասունի և հայության ողջ վրեժը կլուծենք...» («Պատնեշին վրա»): Սարոյի մարտական ընկերն այժմ ռուս կամավոր Յագորն է: Ուշագրավ է, որ հենց Կովկասի համար մղված մարտերում է զոհվում Սարոն՝ վերջին շնչում Յագորին ավանդ թողնելով երկու սուրբ բան՝ «անողորմ վրեժխնդիր կովի» պատգամը և իր պաշտելի զենքը. «...իր հրացանը, միակ բանը, որ փրկեր էր հայրենի քայքայումեն»:

Ս. Պարթևյանի «Սուրբ կովի» կամավորները ընդհանուր շատ բան ունեն Սիամանթոյի «Դուրացնորենի» հերոսների հետ: Եվ պատահական չէր, որ Պարթևյանը Սիամանթոյի այդ շարքը զետեղեց «Դեպի ընդվզում» իր նովելների կողքին՝ լույս ընծայելով «Կամավորները» խորագրի տակ¹²:

«Անոնց մահերը» նովելը Պարթևյանի ծրագրային ստեղծագործություններից է: Այստեղ արվեստագետը խորհրդածում է կամավորական կովի, հերոսացման, հույսի ու հավատի, անողորմ ճակատագրի ու ինքնաբերական մարտնչելու հարցերի շուրջը և շոշափում գրականության խնդիրներ: «— Ո՞վ պիտի գրեք,— ասում է Ավոն,— եղբրական մեծ քերթվածք, հոյակապ դուրացներ-գուլթյունը հայ հեղափոխական մարտիկներուն... Ո՞ր է հղոր քնարերգուն, որ պիտի գա ստրկական դարերուն անդունդին խորեն ժայթքող հայ ըմբոստացումի ամենհի գեղեցկությունն անմահացնել...»: Ավոն, որ կամավորական կոիվներում թրծված մարտիկ է, գիտի, որ եղևնից փախուստը եսական ցավ է, նիհար ու սնարյուն երազներով չէ, որ պիտի կոիվ բորբոքվի: Ստանձնելով գրել հերոսացման Մատյանը, Պարթևյանը դրանով կրկին շեշտում էր իր հայացքը գրականության հասարակական դերի մասին: Արվեստագետի կարծիքով ոչ մի բան, որ կատարվում է ազգային, քաղաքական ու սոցիալական կյանքում, չպետք է անհետ մնա, ինչպիսի պատմական փոթորիկների մեջ էլ գտնվի գրողը:

Պարթևյանի կուսակցական ու հեղափոխական թեմայով գործերում նկատվում է որոշակի սուբյեկտիվիզմ: Հաճախ գրողն ընկնում է ծայրահեղությունների և հակասությունների մեջ: Այդ պատճառով էլ այդ գործերը հրապարակահոսական կոչեր են, սյուժետային կառուցվածքից զրեթե զուրկ:

Պարթևյանը միշտ էլ արձագանքել է հասարակական-քաղաքական իրադարձություններին: Այդ տեսակետից ուշագրավ են նաև «Ձայնը հնչեց» վեպը (1915) և «Անմահ բոցը» դրաման (1917): Իրենց արտահայտած գաղափարներով, հեղինակի լավատեսական տրամադրություններով, ազատագրական պայքարի դրվագներով այս գործերը պատասխանում էին միջազգային կյանքի որոշ հարցերի, մերկացնում ավերիչ պատերազմներն ու եղևնի հրահրողներին: «Ձայնը հնչեց» վեպի նյութը վերցնելով համաշխարհային առաջին պատերազմի ռուս-թուրքական ռազմաճակատի մարտերի դրվագներից, արձակագիրը ընթերցողին տեղափոխում է ազատագրական պայքարի նոր ոլորտ: Քաղաքական, պատմական անցուդարձերի, կովկասահայ կյանքում տեղի ունեցող ազգային ազատագրության նոր հույսերի մի քանի կողմերը ցուցադրելով Պարթևյանը այս գործում կրկին անդրադառնում է կամավորական շարժմանը: Ցուցադրելով իր խոր ատելությունը իմպերիալիստական պատերազմի հանդեպ՝ մերկացնող խոսքով հանդես է գալիս այդ աղետը սանձադերձող տերությունների, առաջին հերթին գերմանական իմպերիալիստների դեմ: «Եվ աշխարհը փի ի բերան մնաց պահ մը այն դժնի վճռականության, այն մոլեգին անհամբերության առջև,— գրում է Պարթևյանը,— որով Կանտի, Բեթհովենի, Գյոթեի երբեմնի պայծառ Գերմանիան կոչնե մարդկային ընկերութենեն դուրս՝ գոռոզ ու գինով խանդավառությամբ մը նետվելով արկածի մը մեջ, որ գեթ

12 Տե՛ս «Ժողովուրդին համար». Փարիզ, 1901, № 2—3:

դեպի անդուզն ալ չի տաներ դինքը, ի՞նչ հաղթանակներու անվերջ շարք մըն ալ ապահովեր իրեն, դարձյալ միլիոնավորներու արյունն ու անեծքը պիտի կուտակեր իր խղճմտանքին վրա»¹³։

Վիպական գործողությունների մեջ, որպես սուանցք, դարգանում է մի լուսավոր գաղափար։ Հերոսների բոլոր արարքները, նրանց հայկանավեր տուն-շանքները և փախուստի ու ետդարձի տրամադրությունները ցուցադրելով՝ գրողը ձգտում է հաստատել իր հիմնական միտումը։ Հայրենիքի շահը բարձր է անձնական սիրո, կենցաղային վայելքների բոլոր տեսակ հարաբերություններից։ Պարթևյանը, վեպի նյութ դարձնելով ուսասան միջավայր՝ կրկին ցուցադրում է իր աշխարհայացքի ամենալուսավոր կողմը։ Ինչպես այլ առիթներով, այնպես էլ այստեղ, գրողը հայ ժողովրդի փրկությունը կապում է ուսուցողական ծոցի հղոր ուժի հետ։ «Կովկասը հայկական վերածնության վառարանն է 60-ական թվականներից ի վեր»։ այսպիսի համոզմունք է հայտնում վեպի հերոսներից մեկը։ Այս ամենի հետ մեկտեղ Պարթևյանի «Ձայնը հնչեց» վեպը, անշուշտ, չունի ժանրին բնորոշ լայնահուն կառուցվածք ու կերպարների բազմակողմանի տիպականացման այն գեղարվեստականությունը, ինչ հատուկ է XX դարի վեպին։ Այնուհանդերձ, բավականաչափ հարադատությամբ արտացոլելով 1896-ի և 1915-ի արյունալի տարիներին առաջ եկած կամավորական շարժումը՝ Պարթևյանն ազատագրական պայքարի թեմայով գրած գործերում ասպարեզ է բերում ընդվզող իրական հերոսներ և միաժամանակ ձգտում է ուժգնություն տալ այդ շարժմանը, բուռն լիցք հաղորդել կամավորների կովին, սաստկացնել ցասման ոգին։

Ս. Պարթևյանը նեոռոմանտիզմի տիպիկ ներկայացուցիչներից մեկն է արձակում և ոճի ինքնատիպ վարպետ է։ Պատահական չէ, որ դեռևս 1901-ին «Բաղմավեպը» (№ 3) գրել է. «Սուրեն Պարթևյանը գեղեցկագիտաց պետի համարվել խլեց», իսկ ավելի ուշ, 1934-ին, Ա. Զոսանյանը նրան բնութագրեց որպես «պերճ ու հղոր արձակի բանաստեղծ մը»՝ նրա անունը միացնելով Սիամանթոյի, Վարուժանի, Զ. Նսալանի, Վ. Թեքեյանի, Մ. Կյուրճյանի անուններին որպես պայքարի գաղափարներով ճոխ և զգայացունց գրողների¹⁴։ Իրոք, գրողի ստեղծագործություններից շատերը՝ «Սայթոն», «Հացին ուժը», «Քույրը», «Կարմիր Շուշանը», «Ձայնը», «Բարի լուր մը Վահրամին» և այլ նովելներ, «Լեւոնալուսը» դրաման վերը բերված բնութագրումների ապացույցներն են։ Սակայն պետք է նկատել, որ շուրջ 25 տարվա տարաշխարհիկ թափառումներն իրենց անջնջելի կնիքն են դրել գրող Պարթևյանի գեղարվեստական մտահղացումների իրականացման վրա։ Մայր ժողովրդին հասած իրար հաջորդող փոքր ու մեծ աղետները, եղեռներ կրթող հայրենասերին ու տաղանդավոր գրողին հաճախ ստիպել են դառնալ իր ժողովրդի կյանքի վավերագիր-հրապարակախոսը, քան թե զբաղվել «իսկական մարդկային» գրականությամբ։ Տարաբախտ մտավորականի անցած ուղու, հասարակական անձնուրաց գործունեության էջերը վկայում են, թե որքան հույզեր ու խոհեր կան գրողի հոգում, ինչքան ծրագրեր են անկատար մնացել։ «Երբ ազատության արշալույսը ծագեցավ,— մի առիթով գրել է Ս. Պարթևյանը,— մենք այն խանդաշտ հույսով վերադարձանք տարագրության հեռուներեն, թե ալ պիտի երանություն ունենայինք համազգի հսկա հասարակության մը աչքին առջև կատարելու մեր ստեղծագործ դատանքը։ Ու մեր սրտերը կուռնին այն երջանիկ հավատքով, թե ալ գնահատումը չէր, որ պիտի պակսեր գրական աղնիվ ու արժանավոր ճիգին։ Հետո,— ի՜նչ երազ,— մենք պիտի կարոտ ըլլայինք Զուլումը, Տառապանքը, Մահը երգելն վերջը՝ Արդարությունը, Աշխատանքը, Կինը, Կյանքը երգել... Փափաքնիս փոքրերնիս մնաց»¹⁵։

Կորստյան ցավով են գրված այս տողերը։ Պարթևյանից մեզ հայտնի վերջին գործը՝ «Ընկերուհին» նովելը, որ տպագրված է Թեոդիկի «Ամենուն տարե-

¹³ Ս. Պարթևյան. Ձայնը հնչեց. Կահիրե, 1915, էջ 3։

¹⁴ Տե՛ս Ա. Զոսանյան. Երկեր. Երևան, 1966, էջ 410—457։

¹⁵ «Հայ գրականություն». Զմյուռնիա, 1911, № 1։

ցույցում»¹⁶, «իսկական մարդկային գրականություն մը» սկսելու Պարթևյանի առաջին էջը լինելով, ասես նրա կարապի երգը գարձավ: Գրողը շհասցրեց «Արգարությունը, Աշխատանքը, Կինը, Կյանքը երգելու փափագը» ամբողջապես իրականացնել:

Սուրեն Պարթևյանը գրական յուրովի խառնվածքի գրող է թե՛ որպես արձակագիր և թե՛ որպես հրապարակախոս: Նրա կյանքն ու գործը ոչ թե ճակատագրի ողբ է, այլ հույսի ու հավատի վառ օրինակ, հումանիզմ, լավատեսություն:

ИДЕИ ПАТРИОТИЗМА И НАЦИОНАЛЬНО-ОСВОБОДИТЕЛЬНОЙ БОРЬБЫ В ПРОИЗВЕДЕНИЯХ СУРЕНА ПАРТЕВЯНА

А. А. ГРИГОРЯН

Резюме

Сурен Партевян (1876—1921)—видный представитель новой армянской литературы, который возродил в западноармянской прозе рубежа столетий тему патриотизма и национально-освободительной борьбы, выдвинул идеологию «проповеди борьбы». Демократическое мировоззрение С. Партевяна и его литературный вкус сформировались под влиянием мирового опыта национально-освободительной борьбы, русских революционных настроений, а также национальных традиций армянской литературы. Несмотря на тяжелые условия жизни, Партевян оставил богатое литературное наследие. Новеллы сборника «Разложение» (1910), трактующие проблему эмиграции, выявляют новые аспекты традиционной темы. В новеллах «Глоточек воды», «Рождественский вечер», «Армия спасения», «Жертвы милосердия», «Запел» отражено крушение иллюзий беженцев. Писатель по-новому оценил патриотизм в сборниках новелл «Армянка» (1911) и «Кровавое досье»; в романе «Прозвучал голос» (1915) автор создал образы воинов-добровольцев.

¹⁶ 1921, Ժն հատոր: